

Թուրքաց խառնիճազանճ յէջքէրին՝ ջնջել եւ հալածել, որպէս եւ եղեն իսկ. զի մեծ սպարապետն բան Քրաքովսքին զնացեալ կոտորեաց, զայլս փախտական արարեալ մեծաւ յազթութեամբ եւ ցնծութեամբ եկն առ թագաւորն ի Լով քաղաքս :

Եւ օր մի ժողովեալ ամենայն Հայք, ծերք եւ տղայք, երիտասարդք, եկք եւ բնակք բազում յոյժ, եւ զնացին ի դարպասն եւ անկեալ ի վերայ յերեսաց մեծաձայն եւ բարձր աղաղակէին ողորմ ու լալի եւ արտասուօք, ճիչ եւ ողբ կսկծալի հանեալ զոչէին ասելով. Ողորմեաց մեզ, ով թագաւոր մեր, եւ բաց զեկեղեցիս մեր : Մինչ զի քաղաքն ամենայն ողբակից լեալ զումարէին ի վերայ մեր, նաեւ զօրքն արքային. մինչ թագաւորն ինքնին եկեալ ի պատուհանն՝ ետես եւ լուաւ զհառաջ, զողբ եւ զգառն կսկիծ : Եւ կոչեաց առ ինքն զՀայոց մեծամեծսն եւ ասէ. Զի՞նչ է խիղճն եւ ողորմելի աղաղակն ձեր : Եւ նոքա պատասխանի տվեալ ասեն. Մեծ օճիրս եւ բազում ֆրասս զործեաց մեզ Նիկօլ եպիսկոպոսն եւ զեկեղեցոյ խաղնան ջնջեաց եւ վատնեալ կորոյս. եւ ինքն զնացեալ ի Հոռոմ՝ կպղեց եւ մօճրեց զգրունս եւ ետ բանալիս քահանայապետիցն աստ : Ասէ բարեպաշտ արքայն. Եւ գիտէ՞ք ստոյգ որ չկայ եւ ոչինչ : Եւ ասեն. Ստոյգ գիտեմք : Ապա ասէ. Մի հոգայք. երբ աստ եկի ես, զձեր բանն կուհոգամ : Եւ կոչեաց զմեծ քահանայապետն եւ ասէ. Առ ձե՞զ է բանալին Հայոց եկեղեցոյն :